ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2021 թվականի N 8

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, ավագանին՝

Որոշեց

Հաստատել ավագանու 15.03.2021թ . հերթական նիստի օրակարգը.

1. Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը
   Զեկ. Ս. Թարթիկյան

2. Սիսավան համայնքի ավագանու 19.01.2021թ. թիվ 3-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը
   Զեկ. Ս. Թարթիկյան

3. Սիսավան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի թիվ 6-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը
   Զեկ. Ս. Թարթիկյան

4. Արարատի մարզի Սիսավան համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) հաստատելու մասին հարցը
   Զեկ. Ս. Թարթիկյան

5. Արարատի մարզի Սիսավան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 21-ի թիվ 15 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը
   Զեկ. Ս. Թարթիկյան

6. Հայաստանի հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի <<2021 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 4-Ն որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություններ կատարելու մասին հարցը

Զեկ. Ս. Թարթիկյան

Կողմ -7

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 9-Ն

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.01.2021Թ. ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34- րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 16.02.2021 թվականի թիվ 01//01444-2021 գրությունը, ավագանին՝

Որոշեց

Արարատի մարզի Սիսավան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի <<2021 թվականի ընթացքում համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>>թիվ 3-Ն որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1. Համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
հիմնական շենքերի և շինությունների համար՝
ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ
բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ**
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **25000 դրամ**
-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **25000 դրամ**
-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50000 դրամ**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500 դրամ**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **2500 դրամ**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն նունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **1500 դրամ.**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար **սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.**

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար **սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:**

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ **2500 դրամ.**

4) Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույքաչափերը հաշվարկված են «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներում առկա 0.5 գործակիցի կիրառմամբ

5) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 60 000 դրամ.
6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 20000 դրամ.
7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 15000 դրամ
8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 դրամ
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 6000 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ.
-· 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ
-501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3900 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ.
-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 7500 դրամ.
-201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21000 դրամ.
9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 105 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ 1500 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 7500 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 60000 դրամ.

դ. խաղատների համար՝ 150000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 75000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 30000 դրամ.

11) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1200 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2400 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ.

12) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 600 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1050 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 450 դրամ.
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով.
զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:
13) Սիսավան համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 30000 դրամ
14) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000 դրամ
15) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 150000 դրամ:
16) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար 750000դրամ.
բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1.500.000 դրամ.
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.100.000 դրամ.
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 3.000.000 դրամ.
17) Սույն հոդվածի դրույքաչափերը բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերի, հաշվարկված են « Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներում առկա 0.3 գործակիցի կիրառմամբ:
2. Համայնքի տարածքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝
1) շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ.
2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդթվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ.
3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 2000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1000 դրամ.

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 300 դրամ փոխհատուցման վճար.

8) Աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) կենցաղային աղբի համար՝ անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 դրամ.

բ) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

- ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 դրամ
- ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 6000 դրամ:

գ) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 50 դրամ,

դ)· արտադրական, արդյունաբերական և գրասենյակային շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5դրամ,

ե) կրթական, մշակութային, և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 3 դրամ:

զ) առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԳՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2021 թվականի N 10

ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.01.2021Թ. ԹԻՎ 6-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34- րդ հոդվածի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 16.02.2021 թվականի թիվ 01//01444-2021 գրությունը, ավագանին՝

Որոշեց

Արարատի մարզի Սիսավան համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 19-ի <<Սիսավան համայնքում հողի 14 սեփականատերերի հողի հարկի վճարման արտոնություն տրամադրելու մասին>> թիվ 6-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

Նախաբանում՝ «Հողի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդված» արտահայտությունը փոխարինել <<Անշարժ գույքի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ մասի>> արտահայտությամբ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 11

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով՝ Սիսավան համայնքի ավագանին՝

Որոշեց

Հաստատել Սիսավան համանքի 2021թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) համաձայն հավելված 1-ի:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 12

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի ԹԻՎ 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 34- րդ հոդվածի 4-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 26.02.2021 թվականի թիվ 01/01759-2021 գրությունը, ավագանին՝

Որոշեց՝

Արարատի մարզի Սիսավան համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 21-ի <<Սիսավան համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ- 8 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները հաստատելու մասին>> թիվ 15 որոշման մեջ վերնագիրը, վկայակոչումը, ինչպես նաև որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ մասով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավա-

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝

Որոշեց

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 8 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Սիսավան համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը (զոտնորման նախագիծը) համաձայն հավելվածի:

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

Սիսավան համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Չև 1				
Հողամասի N գծագրի վրա	Առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)	Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը	Մակերեսը (հա)
1	2	3	4	5
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝	**0,39**		
			Բնակավայրերի	**0,39**
1	Այլ հողատեսքեր	0,39	Ընդանուր օգտագ	0,39
	Բնակավայրերի հողերից՝	**6,54**		
			Բնակավայրերի	**6,54**
2	Այլ հողեր	1,73	Տնամերձ կառուցապատման	1,73
3	Այլ հողեր	1,71	Տնամերձ կառուցապատման	1,71
4	Այլ հողեր	1,79	Տնամերձ կառուցապատման	1,79
5	Այլ հողեր	0,16	Տնամերձ կառուցապատման	0,16
6	Այլ հողեր	0,21	Տնամերձ կառուցապատման	0,21
7	Այլ հողեր	0,07	Տնամերձ կառուցապատման	0,07
8	Այլ հողեր	0,40	Տնամերձ կառուցապատման	0,40
9	Այլ հողեր	0,37	Ընդանուր օգտագ	0,37
10	Այլ հողեր	0,10	Ընդանուր օգտագ	0,10
	Արդյունաբ., ընդերքօգտ. և այլ արտ. նշանակութ. օբ. հողերից՝	**0,72**		
			Բնակավայրերի	**0,72**
11	Արդյունաբերական	0,72	Տնամերձ կառուցապատման	0,72

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Սիսավան, (091) 21-08-70, sisavan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՄԱՐՏԻ 2021 թվականի N 13-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի << 2021 ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 4-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18-րդ հոդվածի 1-ն մասի 5-րդ կետի դրույթներով և ելնելով արտահայտված կարծիքներից, ավագանին՝

Որոշեց

1. «Տեղական տուրքեր» եկամտային հաշվին ավելացնել 56, 0 հազ. դրամ:
2. «Կառավարման ապարատ»՝ ծախսային ծրագրի«հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից պակասեցնել 40,9 հազ. դրամ, այն ուղղել «մասնագիտական ծառայություններ» 4241 հոդվածին:
3.«Հանգիստ, մշակույթ և կրոն » ծախսային ծրագրի «հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածից պակասեցնել 3,1 հազ. դրամ և այն ուղղել «Կառավարման ապարատ»՝ ծախսային ծրագրի «մասնագիտական ծառայություններ» 4241 հոդվածին:

Պլանը սահմանել՝ 100.0 հազ. դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԵՒՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՄՈՒՐԱԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ԹԱՐԹԻԿՅԱՆ